ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/198

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Սևակ Մինասյանի

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2022թ. թիվ 26/26-1/6976-2022 գրությամբ «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 13.04.2022թ. թիվ 39/02-07-260 գրության հիման վրա, 21.04.2022թ. թիվ 26/26-1/6976-2022 գրությամբ նախաձեռնել է «Սևակ Մինասյան

Ավետիսի» Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը դիրքորոշումը.

«10 փետրվարի 2022 թվականի «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ի և «Սևակ Մինասյան Ավետիսի» ԱՁ-ի միջև կնքվել է Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրով «Սևակ Մինասյան Ավետիսի» ԱՁ-ն պարտավորվել է մատուցել գույքագրման ծառայություններ Պայմանագրի հավելված N 2 1-ով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան:

Հատկանշական է նշել, որ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կատարվել է մատուցվող ծառայությունների ծավալի փոփոխություն, մասնավորապես՝ ավելացվել է գույքագրման ենթական հասցեների քանակը:

«Սևակ Մինասյան Ավետիսի» ԱՁ-ի կողմից Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ մատուցվել է Պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունները, սակայն «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ն հրաժարվում է այն ընդունելուց և դրա դիմաց վճարելուց:

Այսպիսով «Սևակ Մինասյան Ավետիսի» ԱՁ-ի և «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ի միջև Պայմանագրի ուժով առկա է պարտավորաիրավական հարաբերություններ, որոնք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և կողմերի միջև կնքված Պայմանագրով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի՝ «1. Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար»:

Վերոնշյալ իրավական կարգավորումից բխում է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պարտավորվում է մատուցել որոշակի ծառայություն, իսկ պատվիրատուն համապատասխանաբար պարտավորվում է ընդունել և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.2.1 կետով սահմանված է Պատվիրատուի Կատարողի կողմից մատուցված ծառայությունը ընդունելու պարտավորությունը, իսկ արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր Կատարողին հայտնելու պարտականությունը:

Պայմանագրի 2.2.2 կետի համաձայն «Պատվիրատուն պարտավոր է Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կաւրարոդին վճարել վերջինիս վճարման ենթական գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը»:

Միևնույն ժամանակ Պայմանագրի 2.3.1 կետով սահմանված է նաև Կատարողի իրավունքը՝ «Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթական գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը»:

Վճարման կարգը սահմանված է Պայմանագրի 4.2 կետով, համաձայն որի՝ «Պատվիրատուն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիան վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված №3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը»:

Պայմանագրի 5.5 կետով սահմանված է Պատվիրատուի կողմից վճարման պարտավորությունը խախտելու դեպքում պատասխանատվության միջոց, այն է՝ «Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով»:

Սույն դեպքում «Սևակ Մինասյան Ավետիսի» ԱՁ-ն պարտավորվել է մատուցել Պայմանագրի Հավելված № 1-ով սահմանված գույքագրման ծառայությունը, իսկ «ԿԱՐԷՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ն պարտավորվել է ընդունել այն և վճարել դրա դիմաց սահմանված չափով և ժամկետում: Այսպիսով, վերոնշյալ կետերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Պայմանագրի ուժով Պատվիրատուն պարտավորվել է Կատարողին վճարել մատուցված ծառայությունների դիմաց, միևնույն ժամանակ Կատարողը իրավունք ունի պահանջելու վճարումները և դրանց խախտման դեպքում նաև տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով: Ինչպես արդեն իսկ նշվել է, Կատարողը ամբողջությամբ մատուցել է կողմերի միջև համաձայնեցված ծառայությունները՝ իրականացրել է Պայմանագրի Հավելված N2 1-ով սահմանված և կողմերի փոխադարձ համաձայնությամբ ավելացված հասցեների գույքագրումը, որի մասին հայտնել է Պատվիրատուին: Պատվիրատուի կողմից չի ներկայացվել որևէ գրավոր առարկություն մատուցված ծառայության արդյունքում թերությունների վերաբերյալ, ինչից հետևում է, որ Պատվիրատուն որևէ առարկություն չունի՝ ընդունում է ծառայությունների պատշաճ մատուցված լինելու փաստը:

Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ Կատարողը պատշաճ կատարել է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, ուստի և Պատվիրատուն պարտավոր է ընդունել և վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

18.04.2022թ. «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Վլադիմիր Յուրիի Գաբրիելյանի կողմից «ԿՄՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ին ներկայացվել է պահանջագիր, որով առաջարկվել է սույն պահանջագիրը ստանալուց հետո 5 օրյա ժամկետում «Սևակ Մինասյան Ավետիսի» ԱՁ- ին վճարել 12 870 000.00 ՀՀ դրամի չափով գումարը, այն փոխանցելով վերջինիս հաշվարկային հաշվեհամարին: Հակառակ դեպքում սույն վեճը կլուծվի դատական կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2022թ.-ին 26/26-1/6976-2022 «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դիմումը մերժել:

Կից ներկայացնում ենք՝ պահանջագիրը «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-ին ուղարկելը հաստատող փոստային անդորրագրի պատճենը, լիազորագիրը, ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենները:»:

«Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/198 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:23-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է վերը նշված դիրքորոշումը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.04.2022թ. թիվ 39/02-07-260 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի միջև 2022թ.-ի փետրվարի 10-ին կնքված N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում, որի ընդհանուր գինը կազմում է 12870000 (տասներկու միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի կողմից Պայմանագրով նախատեսված գույքագրման ծառայությունները չեն մատուցվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված պահանջները՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն 2022թ. ապրիլի 13-ից միակողմանիորեն լուծել է N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1 գնման պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ և ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետով սահմանված պահանջները՝ «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ դիտարկելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/198 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:23-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի միջև 10.02.2022թ. կնքվել է թիվ «ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով գույքագրման ծառայության ձեռքբերում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով:

3. Պայմանագրի N 2 հավելվածով՝ Ծառայության մատուցման ժամանակացույցով, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագրի /համաձայնագրի/ ուժի մեջ մտնելուց հետո 40 օրացուցային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 15.02.2022թ. կնքվել է N 2 Համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1.1 ենթակետի համաձայն՝ հաստատվել է Պայմանագրի մատակարարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

5. Համաձայնագիր N 2-ի Հավելված 1-ով՝ Մատակարարման ժամանակացույցով, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Համաձայնագիր N 2-ի կնքումից 40 օրացուցային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան մինչև 2022թ. մարտի 27-ը:

6. Պատվիրատուն «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ին ուղղված 13.04.2022թ. թիվ 39/02-07-254 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի միջև 2022թ.-ի փետրվարի 10-ին կնքված N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ն պարտավորվել է մատուցել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար գույքագրման ծառայություններ, սակայն Պայմանագրով նախատեսված ծառայությունը չի մատուցվել «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի կողմից:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված պահանջները՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևսնի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն 2022թ. ապրիլի 13-ից միակողմանիորեն լուծել է N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1 գնման պայմանագիրը:»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 13.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2022թ. թիվ 26/26-1/6976-2022 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 13.04.2022թ. թիվ 39/02-07-260 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի միջև 10.02.2022թ. կնքվել է թիվ «ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7» ծածկագրով գույքագրման ծառայության ձեռքբերում ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին

համապատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով:

Պայմանագրի N 2 հավելվածով՝ Ծառայության մատուցման ժամանակացույցով, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագրի /համաձայնագրի/ ուժի մեջ մտնելուց հետո 40 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 15.02.2022թ. կնքվել է N 2 Համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1.1 ենթակետի համաձայն՝ հաստատվել է Պայմանագրի մատակարարման ժամանակացույցը՝ ըստ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

Համաձայնագիր N 2-ի Հավելված 1-ով՝ Մատակարարման ժամանակացույցով, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Համաձայնագիր N 2-ի կնքումից 40 օրացուցային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան մինչև 2022թ. մարտի 27-ը:

Պատվիրատուն «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ին ուղղված 13.04.2022թ. թիվ 39/02-07-254 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի միջև 2022թ.-ի փետրվարի 10-ին կնքված N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ն պարտավորվել է մատուցել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար գույքագրման ծառայություններ, սակայն Պայմանագրով նախատեսված ծառայությունը չի մատուցվել «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ի կողմից:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված պահանջները՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևսնի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն 2022թ. ապրիլի 13-ից միակողմանիորեն լուծել է N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1 գնման պայմանագիրը:»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 13.04.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ն խախտել է իր և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի միջև 10.02.2022թ. կնքված թիվ «ԵՄ-ԷԱՃԾՁԲ-22/7-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2022/198 ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված առարկությանն, ապա հարկ եմ համարում հայտնել, որ առարկությամբ վկայակոչված փաստական հանգամանքների վերաբերյալ, այն է՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները Պայմանագրով սահմանված ժամկետում կատարումը հավաստող որևէ ապացույց չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2022թ. թիվ 26/26-1/6976-2022 գրությամբ «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սևակ Մինասյան Ավետիսի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ